ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ոստիկանության կարիքների համար << ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86 >> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **09.11.2017թ. ժամը 09:00-ին** էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ոստիկանության ՏՎ պետ, ոստիկանության գնդապետ Ռ. Խանզրադյան, անդամներ՝ ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման վարչության տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման բաժնի պետ ոստիկանության գնդապետ Հ.Հովնանյան, ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ս. Սեդրակյան, ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Մ.Հայրապետյան, ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման վարչության տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման բաժնի տեսուչ ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Եղիազարյան, քարտուղար՝ ՀՀ ոստիկանության ՏՎ ԳՀՓՁ բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ.Հովակիմյան: Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները:

ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել **<<ԳԴԱԿ>> ՍՊԸ-ն, <<Գրին լայթ>> ՍՊԸ-ն, <<ՄԷՍ-ՏԵՔՍ>> ՍՊԸ- ն , <<ԴԵՐՁԱԿ>> ՍՊԸ-ն, <<Կ.Կ.Ֆ. ԹՐԵՅԴԻՆԳ>> ՍՊԸ-ն:**

1.2 ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86 գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգով **հանդերձանքի** ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում են, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

2. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 <<ԳԴԱԿ>> ՍՊԸ-ի, <<Գրին լայթ>> ՍՊԸ-ի, <<ՄԷՍ-ՏԵՔՍ>> ՍՊԸ-ի, <<Կ.Կ.Ֆ. ԹՐԵՅԴԻՆԳ>>ՍՊԸ-ի կողմից ներկայացրած՝ մրցույթին մասնակցելու փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 <<ԴԵՐՁԱԿ>> ՍՊԸ-ի հայտով առաջարկած գինը կազմում է 12 206 502 (տասներկու միլիոն երկու հարյուր վեց հազար հինգ հարյուր երկու) ՀՀ դրամ, որի հինգ տոկոսը կազմում է 610 325.1 (վեց հարյուր տաս հազար երեք հարյուր քսանհինգ ՀՀ դրամ տաս լումա) ՀՀ դրամ: Սակայն <<ԴԵՐՁԱԿ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովման գումարը 610 325 (վեց հարյուր տաս հազար երեք հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ է, որը, ըստ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի մինչև հինգ տոկոս է, սակայն հակասում է հրավերի օրինակելի ձևին, որովհետև հինգ տոկոսից պակաս է գրված:

Քննարկումներից հետո 14.11.2017թ. հանձնաժողովը որոշեց, որ, քանի որ <<ԴԵՐՁԱԿ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը հայտով ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսից պակաս է, մերժել վերջինիս ներկայացրած հայտը:

3. Մասնակիցների առաջարկած գները ./Տես աղյուսակ 1./

<<ՄԷՍ-ՏԵՔՍ>> ՍՊԸ –ն աշխատում է առանց ԱԱՀ-ի:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվեց որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86 ծածկագրով ընթացակարգի համար **19-րդ** չափաբաժնի մասով **<<Գրին լայթ>> ՍՊԸ-ին** և **21-րդ** չափաբաժնի մասով **<<ԳԴԱԿ>> ՍՊԸ-ին** առաջարկված գները գերազանցում են նախահաշվային արժեքը: Հաղթողին որոշելու նպատակով հարվիրվել են միաժամանակյա բանակցությունների, որը տեղի է ունեցել ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում տնտեսական վարչությունում **2017թ. նոյեմբերի 17-ին, ժամը 14^00-ին:** Բանակցությունների ընթացքում կատարվել է

գնային առաջարկների նվազեցում **<<Գրին լայթ>> ՍՊԸ-ի** կողմից 217200 ՀՀ դրամից 200160 ՀՀ դրամ,իսկ **<<ԳԴԱԿ>> ՍՊԸ-ի** կողմից 28800 ՀՀ դրամից 28560 ՀՀ դրամ :

4. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

4.1 **ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86** ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվում՝ 9-րդ, 10-րդ, 12-րդ, 22-րդ, 24-րդ, **21-րդ** չափաբաժինների մասով **<<ԳԴԱԿ>> ՍՊԸ** -ն, 5-րդ, 7-րդ, 17-րդ և **19-րդ** չափաբաժինների մասով **<<Գրին լայթ>> ՍՊԸ** -ն, 3-րդ, 11-րդ, 15-րդ և 23-րդ չափաբաժինների մասով **<<ՄԷՍ-ՏԵՔՍ>> ՍՊԸ** –ն, 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ 8-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ 18-րդ, և 20-րդ **<<Կ.Կ.Ֆ. ԹՐԵՅԴԻՆԳ>>ՍՊԸ**-ն որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

4.2 "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-24/Հ/86 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ ՊԵԿ-ից կատարված հարցման արդյունքների վերջնաժամկետը լրանալու հաջորդ օրը ժամը **09:00-ին**:

Հանձնաժողովի
Նախագահ՝

ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ պետ, ոստ. գնդապետ Ռ.Խանզրադյան

Անդամներ՝

ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման վարչության տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման բաժնի պետ ոստիկանության գնդապետ Հ.Հովնանյան

ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ս. Սեդրակյան

ՀՀ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Մ.Հայրապետյան

ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման վարչության տեխնիկական միջոցների ներդրման և շահագործման բաժնի տեսուչ ոստիկանության ավագ լեյտենանտ Ա.Եղիազարյան

Քարտուղար՝ ՀՀ ոստիկանության ՏՎ ԳՀՓՁ բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ.Հովակիմյան